հրովարտակաց և 'ի պատճառս երկու իրացս այսոցիկ խափանեալ են շինուածքն ։

Արդ՝ խնդրեմք զի քակեսցին բովանդակ շինութիւնք Հայոց, և տեղին դարձցի 'ի վիճակն առաջին, որպէս էր նախ քան զթուականն ١٢٥٢ ։

Ընթերցան 2 հրովարտակքն եւ 5 Հէօճճէթքն Հայոց սակս շինութեան Ջիթեննեաց լերին, և մուծան յարձանագիրն ։

Հաֆըզ Բաշխտ Էֆէնտի. Շինութիւնք Ջիթեննեաց լերին հիմնեալ են 'ի վերայ երկուց հրովարտակաց. մին մշտընջենաւոր և միւսն 'ի հաստատութիւն նորին. և երկոքեանն պարունակեն զխնդիր նորոգութեան, ըստ խնդրանաց Հայոց. նորոգել 'ի վերայ բնական դրից, եւ մի ոք արգելուլ զպատարագս և զկանթեղս նոցա. սոքա են իմաստք հրովարտակաց, և 5 հատոր Հէօճճէթք տուեալ 'ի Դատաւորաց, առաջին՝ հիմնեալ 'ի վերայ առաջին հրովարտակին, յորում հրաման տայ Հայոց շինել սեղան 'ի ներքոյ գըմբեթին և դնել զսպաս նորին, և ունիլ զբանալի տեղւոյն ։ 2. և 3. Հէօճճէթքն հրաման տան սալել զկատակս դաւթին, ծեփել զորմս, շինել ջրամբար 'ի կողմն հիւսիսոյ, և նորոգել զհարաւայինն, շինել զարտաքին դուռն, և ձգել անտի ձեղուն տախտակամած մինչ 'ի դուռն գմբեթին, շինել սենեակ լուսարարի ։ 4. Շինեալ են սենեակքս 'ի վերայ ճիթահանին, զորոյ զտեղին գնեալ են 'ի գիւղականաց, հրամանաւ Դատաւորին՝ մի 'ի ներքոյ 2 գրամբք և 2 մեծ և փոքր սենեակ 'ի վերայ նորա, և յետ աւարտելոյ զշինութիւնն տուեալ է հինգերորդ Հէօճճէթն Համատուլլահ Դատաւորն, և բացայայտ գրեալ է թէ, ոչ է վնասակար ումեք ։ Սակայն Յոյնք բողոքեն թէ շինութիւնքն ոչ են ըստ մտաց հրովարտակաց և Հէօճճէթից, այլ նորասահման և ինքնահնար, ուստի հարկ է բացայայտ որոշել, թէ ո՞ր 'ի նոցանէ համեմատ հրովարտակին է եւ ո՞ք ոմանք հրամանաւ Դատաւորին. զի երկոքին կողմն միաբանին 'ի վերայ եղծման միոյ հրովարտակին և 'ի վերայ միոյն հակառակին, քննեցան իմաստք հրովարտակաց. եթէ արդարեւ ըստ բողոքելոյ Յունաց ջնջեալ գոլով վերջինն, հարկ լինի՞ առաջնոյն եւս ջնջիլն, թէ ըստ ծանուցանելոյ